

<i>Համարը N 133-Ն</i>	<i>Տեսակը Մայր</i>
<i>Տիպը Որոշում</i>	<i>Կարգավիճակը Գործում է</i>
<i>Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 28.02.07./13(537)</i>	<i>Ընդունման վայրը Երևան</i>
<i>Հոդ.279</i>	
<i>Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն</i>	<i>Ընդունման ամսաթիվը 01.02.2007</i>
<i>Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ</i>	<i>Ստորագրման ամսաթիվը 08.02.2007</i>
<i>Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ</i>	<i>Վավերացման ամսաթիվը 15.02.2007</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.03.2007</i>	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՋԱՐԴՈՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ՀԵՏ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահ Ռ. Քոչարյան
 15 փետրվարի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 փետրվարի 2007 թվականի N 133-Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՋԱՐԴՈՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ՀԵՏ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Հաստատել թանկարժեք մետաղների ջարդոնների և թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքի կարգը՝ կապված հարգորոշման և (կամ) հարգադրոշման հետ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հայաստանի Հանրապետության
 վարչապետ

Ա. Մարգարյան

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՋԱՐԴՈՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ (ԿԱՍ) ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ՀԵՏ

1. Սույն կարգով կարգավորվում է թանկարժեք մետաղների ջարդոնների և թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքը՝ կապված հարգորոշման և (կամ) հարգադրոշման հետ:

2. Սույն կարգում նշված հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով՝

ա) թանկարժեք մետաղների ջարդոն (այսուհետ՝ ջարդոն)՝ թանկարժեք մետաղների կտորներ՝ տարբեր ձևի և չափի, որոնք առաջացել են ոսկերչական իրերի մաշվածության կամ ձևախախտման արդյունքում, թանկարժեք մետաղներից պատրաստվող իրերի արտադրության ընթացքում առաջացած կտորներ, գնդիկներ, տաշեղներ, լաբորատոր ամանեղենի կտորներ, առանձին մասեր, տաշեղներ, գնդիկներ, ոչ նպատակային նշանակության և անօգտագործելի հանդիսացող թանկարժեք մետաղներից պատրաստված այլ իրեր, անընթեռնելի մետաղադրամներ և այլ նմանատիպ առարկաներ:

բ) թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքներ (այսուհետ՝ նախապատրաստվածք)՝ թանկարժեք մետաղներից պատրաստվող իրերի արտադրական գործընթացը չավարտված, իրերի վերջնական տեսք չստացած ձուլվածքներ, դրոշմվածքներ, գլանվածքներ, թիթեղներ՝ տարբեր ձևի և տեսքի, կռած և կոփած առարկաներ, որոնք պիտանի և անհրաժեշտ են որոշ արտադրական գործընթաց կատարելուց հետո պատրաստի իր ստանալու համար:

3. Ջարդոնները և նախապատրաստվածքները հարգորոշվում ու հարգադրոշմվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիա ունեցող անձանց (այսուհետ՝ լիցենզավորված անձ) կողմից՝ «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան:

4. Ջարդոնների և նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարգերով հարգադրոշմների առկայության դեպքում՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ կետով սահմանված դեպքի:

5. Այն ջարդոնների և նախապատրաստվածքների, որոնք հնարավոր չէ հարգադրոշմել՝ կախված իրենց կառուցվածքից և չափերից, մանրածախ առուվաճառքն իրականացվում է միայն հարգորոշումից հետո՝ փակ և կապարակնքված տուփերով: Տուփը պետք է լինի այնպիսին, որպեսզի հնարավոր լինի այն բացել միայն կոտրելու կամ կապարակնիքը վնասելու դեպքում:

Կապարակնիքին պետք է ամրացված լինի մետաղյա թիթեղ (բայց ոչ երկաթյա), որի վրա պետք է գրված լինի «կապարակնիք» բառը, որից հետո պետք է նշված լինեն տուփում պարունակվող

ջարդոնի և նախապատրաստվածքի հարգը հավաստող հարգադրոշմը, լիզատուրային քաշը, որը պետք է գրված լինի քերծվածքային տարբերակով, և այն լիցենզավորված անձի տարբերանիշը, որն իրականացրել է հարգորոշում:

6. Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարգերին և հարգադրոշմներին չհամապատասխանող հարգեր և հարգադրոշմներ ունեցող ջարդոնների ու նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքն իրականացվում է միայն հարգորոշումից և Հայաստանի Հանրապետությունում սահմանված հարգերով հարգադրոշմումից հետո:

7. Մույն կարգի 5-րդ կետով սահմանված ջարդոնների և նախապատրաստվածքների տուփի ու կապարակնիքի վնասված չլինելու պարագայում տուփում պարունակվող ջարդոնի և նախապատրաստվածքի կապարակնիքին ամրացված մետաղյա թիթեղի վրա նշված հարգին անհամապատասխանության դեպքում՝ լիցենզավորված անձն օրենքով սահմանված կարգով և չափով կրում է պատասխանատվություն:

8. Մույն կարգի 5-րդ կետով սահմանված ջարդոնների և նախապատրաստվածքների տուփի ու կապարակնիքի վնասված լինելու պարագայում տուփում պարունակվող ջարդոնի և նախապատրաստվածքի կապարակնիքին ամրացված մետաղյա թիթեղի վրա նշված հարգին անհամապատասխանության դեպքում՝ մանրածախ առուվաճառք իրականացնող անձն օրենքով սահմանված կարգով և չափով կրում է պատասխանատվություն:

9. Ջարդոնների և նախապատրաստվածքների մանրածախ առուվաճառքի նկատմամբ վերահսկողությունը և ստուգումներն իրականացվում են օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան